## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

**«ԲՄԴՊՈԱԿ-ԳՀԱՇՁԲ-2021/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի (շարունակություն)**

գ. Բջնի

_25_ _հոկտեմբերի_ _2021թ._
ժամը _10$^{00}$_

**Մասնակցությամբ՝**

Հանձնաժողովի նախագահ՝ **Միքայել Պողոսյան**
Հանձնաժողովի անդամներ՝ **Գարեգին Մկրտչյան**
**Գոհար Մանուկյան**
Հանձնաժողովի քարտուղար՝ **Պավել Գաբրեյան**

### 1. «ԲՄԴՊՈԱԿ-ԳՀԱՇՁԲ-2021/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից «ՍԱՍ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից պայմանագիր կնքելու իրավունքից հրաժարվելու մասին

1.1 «ՍԱՍ ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը սույն թվականի հոկտեմբերի 15-ին գրավոր (էլեկտրոնային փոստի միջոցով) դիմել է Պատվիրատուի ղեկավարին և հայտնել, որ հրավերով սահմանված ծավալաթերթն ու նախագիծը աշխատակցի կողմից սխալ է դիտարկվել, ուստի խնդրում ենք մեր կողմից առաջարկված հայտը ճանաչել անվավեր և հեռացնել 1-ին չափաբաժնով ընտրված մասնակցի ցուցակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

### 2. «ՍԱՍ ՇԻՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց սկսելու մասին

2.1 Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ. պարբերության դրույթներով և հիմք ընդունելով վերոգրյալը, հանձնաժողովը որոշեց լիազորված մարմնին ներկայացնել տեղեկատվություն՝ «ՍԱՍ ՇԻՆ» ՍՊԸ-ի տվյալները գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

### 3. Տեղեկատվություն ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների և պայմանագիր կնքելու որոշման մասին

3.1 Ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին տեղեկատվությունը ներկայացված է ստորև.

| Հ/հ | Ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների անվանումները | Մասնակցի կողմից առաջարկված գները (ՀՀ դրամ), ընդ որում՝ | | |
|---|---|---|---|---|
| | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | «ՊԵՏ ՇԻՆ» ՍՊԸ | 9,845,620 | 1,969,120 | 11,814,740 |
| 2 | «Ռոստորգ» ՍՊԸ | 11,373,390 | 2,274,678 | 13,648,068 |
| 3 | «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ | 11,385,000 | 2,277,000 | 13,662,000 |
| 4 | «Տուրիստաս» ՍՊԸ | 11,402,768.333 | 2,280,553.667 | 13,683,322 |
| 5 | «Էլիտ Հիլզ» ՍՊԸ | 11,900,000 | 2,380,000 | 14,280,000 |

3.2 Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով՝ հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և սահմանել անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

3.3 Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի դրույթներով՝ անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

**4. Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի անուն-ազգանունները և ստորագրությունները**

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի նախագահ՝** | (ստորագրությունը) | **Մ. Պողոսյան** |
| **Հանձնաժողովի անդամներ՝** | (ստորագրությունը) | **Գ. Մկրտչյան** |
| | (ստորագրությունը) | **Գ. Մանուկյան** |
| **Հանձնաժողովի քարտուղար՝** | (ստորագրությունը) | **Պ. Գաբրելյան** |